

լեցուած, ինչպէս եւ Ֆաուստը չի վերջանար անյուսութեամբ, այլ կեանքի բովանդակութիւնը հասարակութեան ծառայելու մէջ փնտռելով:

Շանթի լեզուի մասին արտայայտուած կարծիքը,– անկանոն, ռամիկ եւ գռեհիկ,– անհիմն ու անիրաւացի է. ճիշտ է որ Շանթի լեզուն ունի որոշ զարտուղութիւններ ժամանակակից քերականական կանոններէն, սակայն ընդհանուր առմամբ, անոր լեզուն լաւ է եւ բովանդակութեան համաձայն փոփոխուող:

Երկու քննադատներու ուշադրութենէն վրիպած է գրուածքի գնահատութիւնը՝ հոգեբանական տեսակէտէն. կան ինչ ինչ փաստեր, որոնք կ'ապացուցանէին Վանահօր եւ Աբեղայի տիպարներուն որոշ թերութիւնները՝ հոգեբանական տեսակէտով: Վանահօր անտեղեակութիւնը իշխանուհիի մասին, երբ ան կը սկսի եկեղեցին շինել, անըմբռնելի է: Վանահայրը շատ լաւ գիտէր անշուշտ իշխանուհիին զգացումները, հետեւաբար այդ զգացումներուն իշխանուհիին բերնով արտայայտութիւնը չէր կրնար առիթ ըլլալ շինուած եկեղեցին քանդելու:

Աբեղայի մէջ սիրոյ զարգացումը նոյնպէս կը ցուցնէ հոգեբանական որոշ թերութիւններ. ճիշտ է որ իր կրթութիւնը վանքի մէջ ստացած է եւ իր ամբողջ պատանեկութիւնը անապատի մէջ անցընող մէկը անհամեմատ շատ կը ցնցուի աղջկան մը մարմնի հպումէն, սակայն այդ դէպքը, մանաւանդ եթէ նկատի առնենք դէպքի վայրն ու պայմանները, չէր կրնար այդքան մտապատկերներու պատճառ ըլլալ. սէրը սնուցանող նոր երեւոյթներ բոլորովին կը պակսին, քանի որ միւս կողմէն Աբեղան անշուշտ պիտի աշխատէր մարել իր մէջ ինկած նոր կայծը:

Գրուածքի ամբողջ բովանդակութիւնը զգացմունքի եւ բանականութեան պայքարն է. սակայն անոնց յարաբերութեան մէջ համաչափութիւն չկայ. կը կարծեմ թէ անլի հոգեբանական պիտի ըլլար, եթէ զգացմունքն ու բանականութիւնը գէթ հաւասարաչափ երեւային Շանթի երեւան երբա՞ծ այս երկու տիպարներուն մէջ: